Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ ԹԻՎ 302-Ա-305-Ա, ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ ԹԻՎ 306-Ա-308-Ա, ԱՊՐԻԼԻ 25-Ի ԹԻՎ ԹԻՎ 310-Ա-316-Ա, ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ ԹԻՎ 317-Ա, 318-Ա, ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 319-Ա-325-Ա ԵՎ ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ 326-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 302-Ա, 303-Ա և 311-Ա որոշումների նախաբաններում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթին կատարված հղումը թերի է: Անհրաժեշտ էր հղում կատարել նաև 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթին: Բացի այդ, թիվ թիվ 302-Ա և 303-Ա որոշումներում գրառվել են հապավումներով բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ թիվ 304-Ա և 321-Ա որոշումների վերնագրերում և բովանդակություններում անհրաժեշտ է նշում կատարել անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերյալ:

Թիվ թիվ 304-Ա, 305-Ա և 321-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին:

Թիվ 306-Ա որոշման տեքստը կիսատ է գրառված: Բացի այդ, տեքստի ներքևի մասում անհրաժեշտ է գրառել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները (ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը, ստորագրությունը, ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը):

Թիվ 307-Ա որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին, իսկ որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Թիվ 308-Ա որոշմամբ խախտվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 69-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ գրավոր բողոքը քննության է առնում համայնքի ղեկավարը՝ հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ: Բացի այդ, որոշման նախաբանում «հրամանի հավելված» բառերի փոխարեն անհրաժեշտ է գրառել «հրամանի 1-ին կետով հաստատված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների անփոփման կարգի» բառերը:

Թիվ 310-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր գրառել ոչ թե «հրամանով սահմանված», այլ՝ «հրամանով հաստատված» բառերը:

Թիվ թիվ 312-Ա, 313-Ա, 319-Ա, 322-Ա, 323-Ա, 325-Ա որոշումների բովանդակությունների մեջ և 315-Ա որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին:

Թիվ թիվ 314-Ա, 316-Ա և 317-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի (նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը) և 18-րդ հոդվածի 6-րդ մասի (ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը) դրույթներին: Բացի այդ, թիվ 317-Ա որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին:

Թիվ 318-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին: Բացի այդ, որոշման 1-ին կետի 1-4-րդ ենթակետերում հանձնաժողովի անդամների պաշտոնների անվանումները թերի են գրառված:

Թիվ 320-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներին:

Թիվ թիվ 324-Ա և 326-Ա որոշումների նախաբաններում ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշմանը կատարված հղումը թերի է գրառված: Բացի այդ, անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին և ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու համապատասխան որոշմանը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
23.06.2022թ.